ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՉԵԽԻԱ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՉԵԽԻԱ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• Էլ.փոստ՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մուտքի և վիզայի մասին ընդհանուր տեղեկություններ 5
2. Ներգաղթ աշխատանքի նպատակով 8
3. Ներգաղթ ուսման նպատակով 22
4. Բնակությունը 28
5. Ապաստան շնորհելու գործընթացը 32
6. Ընտանիքի վերամիավորում 33
7. Առողջապահության համակարգը 35
8. Սոցիալական ապահովագրության համակարգը 37
9. Բնակարանային պայմանները 37
10. Դիպլոմների ճանաչումը 38
11. Քաղաքացիության/հպատակության տրամադրումը 39
Օգտակար կոնտակտներ և տեղեկություններ 40

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՉԵԽԻԱ

1. Մուտքի և վիզայի մասին ընդհանուր տեղեկություններ

Չեխիայի օրենսդրությամբ նախատեսված՝ ներգաղթի հիմնական կատեգորիաներն են. ընտանիքի վերամիավորումը, աշխատանքը և ուսումը:
Օտարերկրացիների վերաբերյալ ակտի համաձայն՝ հիմնական տարբերակումները հետևյալն են. կարճաժամկետ վիզաներ, ներառյալ՝ օդանավակայանի վիզա (A կարգի վիզա), տարանցիկ վիզա (B կարգի վիզա) և մինչև 90 օր երկրում մնալու վիզա (C կարգի վիզա), ինչպես նաև երկարաժամկետ վիզա, որը թույլատրում է 90 օրից ավելի մնալ երկրում (D կարգի վիզա):
Ներգաղթի ստանդարտ գործընթացը թելադրված է երկարաժամկետ վիզայի տրամադրմամբ: Երկարաժամկետ վիզա ստացած օտարերկրացին իրավունք ունի Չեխիայի տարածքում գտնվել երեք ամսից ավելի, բայց մեկ տարին չգերազանցող տևողությամբ: Այս ժամանակահատվածի սպառվելով՝ երկարաժամկետ վիզան երկարացման ենթակա չէ, փոխարենը օտարերկրացին կարող է դիմել երկարաժամկետ բնակության թույլտվություն ստանալու՝ երկրում գտնվելու նույն հիմնավորմամբ:

Իրավասու ատյանները

Վիզաներ տրամադրելու իրավասու են Չեխիայի Հանրապետության դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսարանները: Չեխիայի Հանրապետության դիվանագիտական առաքելություններն իրավասու են որոշում կայացնելու կարճաժամկետ վիզաների տրամադրման, այսինքն՝ օդանավակայանի տարանցիկ վիզաների (A), տարանցիկ վիզաների (B) կամ մինչև 90 օր ժամկետով վիզաների (C) առնչությամբ: Երկարաժամկետ (90 օրյա ժամկետը գերազանցող) վիզաների, երկարաժամկետ կամ մշտական բնակության թույլտվության

համար դիմումները քննում է Չեխիայի Հանրապետության՝ Օտարերկրացիների հարցերով ոստիկանությունը: Երեք ամիսը գերազանցող ժամկետով Չեխիայի Հանրապետությունում մնալու համար պահանջվում է ձեռք բերել երկարաժամկետ վիզա:
Քանի որ Չեխիայի Հանրապետությունը Շենգենյան համաձայնագրի անդամ պետություն է, Չեխիայի մուտքի վիզա ունեցող անձն իրավունք է ստանում մուտք գործելու Շենգենի ողջ տարածք:

Տարանցիկ վիզաներ (A, B)

Օդանավակայանի վիզան (A) թույլ է տալիս անցնել Շենգենյան գոտու միջազգային օդանավակայանով՝ առանց Շենգենի տարածք մուտք գործելու:
Տարանցիկ վիզան (B) տրամադրվում է հնգօրյա ժամկետով՝ Շենգենյան ցամաքային տարածքով անցնելու համար:

Շենգենյան կարճաժամկետ վիզա (C)

Կարճաժամկետ վիզա (C) ստացած անձին իրավունք է ընձեռվում ցանկացած 180-օրյա ժամանակահատվածում մինչև 90 օր գտնվելու Շենգենի տարածքում՝ զբոսաշրջության, ընտանեկան կամ աշխատանքային նպատակներով:
Որոշակի կարգի անձանց, օրինակ՝ ձեռներեցների, ուսանողների կամ լրագրողների համար, թղթավարությունը պարզեցվում է: Հաճախակի ճամփորդող որոշակի կարգի անձանց (ներառյալ ձեռներեցները, լրագրողները, ուսանողները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) կարող է տրվել բազմակի մուտքի վիզա՝ երկարաժամկետ վավերությամբ, իսկ դիվանագիտական անձնագիր ունեցողները ազատվում են վիզա ձեռք բերելու պարտավորությունից:

Երկարաժամկետ վիզա (D)

Երկարաժամկետ վիզայի համար դիմող անձինք պետք է անձամբ Չեխիայի դեսպանատուն կամ հյուպատոսարան ներկայացնեն Չեխիայի վիզայի համար դիմումը
http://www.mvcr.cz/rady/formulare/zadost_vizum_e.pdf՝ պահանջվող մյուս բոլոր փաստաթղթերի հետ միասին: Դիմողից կգանձվի վիզայի դիմումի վճար, որից, սակայն, ազատված են 15 տարեկանից երիտասարդ

անձինք: Երկարաժամկետ վիզայի դիմումը և պահանջվող բոլոր փաստաթղթերը ստանալուն պես՝ դիվանագիտական առաքելությունը դրանք կուղարկի Չեխիայի Հանրապետության Օտարերկրացիների հարցերով ոստիկանություն, ուր դրանց ընթացք կտրվի: Յուրաքանչյուր դիմում քննության է առնվում առանձին: Որոշումը հետ է ուղարկվում տվյալ առաքելություն, որն էլ տեղեկացնում է դիմողին: Դրական որոշման դեպքում առաքելությունը դիմողի ճամփորդական փաստաթղթում դրոշմ է փակցնում, սակայն այն բանից հետո, երբ օտարերկրացին Չեխիայի Հանրապետությունում իր գտնվելու ողջ ժամանակահատվածի համար ճամփորդական ապահովագրության առկայությունը հաստատող փաստաթուղթ է ներկայացնում:

Պահանջվող փաստաթղթերը

- ✓ դիմումի ձև (http://www.mvcr.cz/rady/formulare/zadost_vizum_e.pdf)
- ✓ 2 լուսանկար
- ✓ վավեր անձնագիր
- ✓ Չեխիայի Հանրապետությունում մնալու համար բավարար դրամական միջոցների առկայությունը հաստատող փաստաթուղթ (բացի այն դեպքերից, երբ դիմում եք աշխատանքային գործունեության նպատակով)
- ✓ Չեխիայի Հանրապետությունում մնալու նպատակի վերաբերյալ փաստաթուղթ (Չեխիայի Հանրապետությունում կրթական ծրագրում ընդգրկված լինելու մասին վկայական, Աշխատանքի տեղավորման գրասենյակի կողմից տրված աշխատանքի թույլտվության պատճենը կամ աշխատանքի թույլտվության դիմումի գրանցման համարը, ամուսնության/ծննդյան վկայականը, հրավերի նամակ և այլն)
- ✓ Չեխիայի Հանրապետությունում բնակարանային պայմանների առկայությունը վկայող փաստաթուղթ (օրինակ՝ վարձակալության պայմանագիր)
- ✓ Ոստիկանությունից տեղեկանքի համար դիմումի ձև (Քրեական պատասխանատվության ենթարկված լինել/չլինելու վերաբերյալ), որը ստանում են դեսպանատնից: Ներկայացվում են բոլոր փաստաթղթերի բնօրինակները կամ վավերացված

կրկնօրինակները: Ձեր մասնավոր դեպքի առնչությամբ բոլոր պահանջների և անհրաժեշտ փաստաթղթերի կամ դիմում ներկայացնելու վերաբերյալ հանգամանալից տեղեկությունների համար կարող եք դիմել Չեխիայի Հանրապետության մոտակա դեսպանատուն կամ հյուպատոսարան:

Դիմումը մերժելու պատճառները կարող են լինել՝

- դիմող օտարերկրացին ընդգրկված է անցանկալի անձանց ցուցակում,
- ակնհայտ է, որ Չեխիայում օտարերկրացու մնալու համար անհրաժեշտ ծախսերն ընկնում են Չեխիայի Հանրապետության վրա,
- օտարերկրացու ներկայությունը Չեխիայում կարող է վտանգել հասարակական կարգը,
- օտարերկրացու ներկայությունը Չեխիայում հակասում է Չեխիայի Հանրապետության արտաքին քաղաքականության շահերին կամ բացահայտված է երկրի տարածքում նրա գտնվելու համար այլ լուրջ խոչընդոտ,
- օտարերկրացին վերջին հինգ տարիների ընթացքում խախտել է Օտարերկրացիների մասին օրենքով սահմանված որևէ պարտավորություն:

Դիմելը և որոշումների վարչական կամ դատական վերահսկումը

Վիզայի համար դեսպանատուն դիմողները զրկվում են ստանդարտ վարչական գործառութային իրավունքներից, ինչպես, օրինակ, հասանելիությունն իրենց անձնական թղթապանակներին, պատճառաբանված որոշում ստանալու իրավունքը և բողոքարկման իրավունքը:

2. Ներգաղթ աշխատանքի նպատակով

Աշխատանքային ակտի 89-րդ հոդվածի համաձայն՝ Չեխիայի Հանրապետությունում ժամանակավոր բնակություն հաստատած՝ երրորդ երկրների բոլոր հպատակները, աշխատանքի անցնելու համար պետք է,

որպես սկզբունք, բավարարեն երկու պայման. պետք է ունենան աշխատանքի վավեր անհատական թույլտվություն (ինչն անհրաժեշտ է անգամ ոչ լրիվ դրույքով կամ ժամանակավոր աշխատանքի պայմանագրերի համար) և միաժամանակ պետք է ունենան երկրում գտնվելու թույլտվություն (կամ, երկրում գտնվելու առաջին տարում՝ երկարաժամկետ վիզա): Սովորաբար աշխատանքի թույլտվությունը երկրում գտնվելու թույլտվություն ստանալու նախապայման է հանդիսանում, սակայն այլ նպատակներով (ասենք՝ ընտանիքի վերամիավորում, ուսում կամ ինքնազբաղվածություն) արդեն Չեխիայի Հանրապետությունում բնակվող օտարերկրացիները նույնպես կարող են դիմել աշխատանքի թույլտվություն ստանալու համար: Այս նպատակով երկրում մնալու, ինչպես նաև աշխատանքի թույլտվությունը կարող է տրվել առավելագույնը մեկ տարով: Աշխատանքի թույլտվություն չպահանջող՝ մշտական աշխատանքի իրավունքը ներառվում է մշտական բնակության թույլտվության մեջ:

Աշխատանքի առնչությամբ Չեխիայի Հանրապետությունն ունի եռակի թույլտվության բարդ համակարգ. առաջին՝ գործատուն պետք է օտարերկրյա աշխատող վարձելու թույլտվություն ձեռք բերի, երկրորդ՝ օտարերկրյա աշխատողը պետք է աշխատանքի թույլտվություն ձեռք բերի և երրորդ՝ օտարերկրացին պետք է երկրում գտնվելու թույլտվություն ձեռք բերի: Աշխատանքի գրասենյակը գործատուին օտարերկրյա աշխատող վարձելու թույլտվություն կտա միայն այն դեպքում, երբ աշխատանքի տվյալ թափուր տեղը գրանցված է եղել Աշխատանքի գրասենյակի՝ թափուր աշխատատեղերի ցանկում և չի համալրվել «գործազուրկների» ցուցակից:

Գործատուի՝ թույլտվության դիմումի մեջ պետք է ներկայացվի պահանջվող աշխատողների ճշգրիտ թիվը և դրանց թվում կին աշխատողների տոկոսը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի առաջարկը՝ նշելով աշխատանքի նախատեսվող տևողությունը, ապագա աշխատուժի մասնագիտական բաղադրիչները (ներառելով, օրինակ, մասնագիտական որակավորման պահանջները), աշխատավարձի չափը և օտարերկրյա աշխատողի բնակարանային պայմանների երաշխիքը: Սրա հետ մեկտեղ պետք է ներկայացվի ձեռնարկատիրոջ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը

հաստատող փաստաթղթի վավերացված պատճենը (օրինակ՝ քաղվածք Առևտրական ռեգիստրից կամ աշխատանքային արտոնագրից): Այս գործընթացի տևողությունը մոտավորապես մեկ ամիս է:
Օտարերկրացին աշխատանքի թույլտվություն ստանալու համար կարող է դիմել միայն գործատուի՝ առաջին թույլտվությունն ստանալուց հետո: Այս դիմումը պետք է ներկայացվի նույն Աշխատանքի գրասենյակ և պետք է ներառի. օտարերկրացու ճամփորդական փաստաթղթի պատճենը, օտարերկրացուն աշխատանքի ընդունելու մասին գործատուի գրավոր հավաստումը, օտարերկրացու՝ տվյալ բնագավառում աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման փաստաթղթի վավերացված պատճենը (ինչպես, օրինակ, մասնագիտության վկայականը, բարձրագույն ուսումնական հաստատության վկայականը կամ համալսարանական դիպլոմը), օտարերկրացու առողջական վիճակի մասին բժշկի վկայականը (ոչ ավելի, քան մեկ ամսվա վաղեմության) և չեխական 500 կրոնի (20 եվրոյի) չափով վարչական վարձավճար: Այս գործընթացի տևողությունը նույնպես շուրջ մեկ ամիս է:
Հարկ է նշել, որ թույլտվությունները սահմանափակվում են ոչ միայն տվյալ գործատուով, այլև տվյալ աշխատատեղով:

<u>Ինքնազբաղվածություն</u>

Չեխիայի Հանրապետությունում աշխատանք ձեռնարկելու համար, երրորդ երկրների հպատակ օտարերկրացին պետք է ստանա աշխատանքային արտոնագիր՝ գրանցված Չեխական ընկերությունների ռեգիստրում, և երկրում գտնվելու թույլտվություն:
Աշխատանքային արտոնագրի համար դիմումը (կամ փոքր ձեռնարկատիրության մասին հայտարարությունը) պետք է ներկայացվի տեղի՝ Աշխատանքային արտոնագրերի գրասենյակ: Միաժամանակ պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը. դիմումի կամ հայտարարագրման լրացված ձև, բնութագիր (քրեական պատասխանատվության ենթարկված չլինելու փաստաթղթի պատճենը կամ իր հպատակության պետության կողմից տրված հավասարազոր փաստաթուղթ), ձեռնարկատիրության վայրի օրինական շահագործման մասին վկայական, անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական որակավորումը հաստատող վկայական և 1000 չեխական կրոնի (40

եվրոյի) չափով վարչական վարձավճար՝ յուրաքանչյուր հայտարարագրված գործունեության համար:

Վերը թվարկած փաստաթղթերի ներկայացումից հետո Աշխատանքի արտոնագրման գրասենյակը վկայական է տալիս՝ հավաստելով, որ տվյալ օտարերկրացին բավարարում է գործունեություն ձեռնարկելու համար ներկայացվող բոլոր ընդհանուր և մասնավոր պայմանները: Այս վկայականն օտարերկրացուն հնարավորություն է տալիս դիմելու Օտարերկրացիների հարցերով ոստիկանություն՝ ձեռնարկատիրական գործունեության նպատակով երկրում բնակվելու թույլտվություն ստանալու համար:

Եթե երրորդ երկրի քաղաքացին դիմումը ներկայացրել էր այլ երկրում, բնակության թույլտվությունն ստանալուց հետո նա կարող է մուտք գործել Չեխիայի Հանրապետություն և թույլտվությունը ներկայացնել Աշխատանքի արտոնագրման գրասենյակ, որտեղից էլ կստանա աշխատանքային արտոնագիրը: Այնուհետև ներգաղթողը պետք է գրանցվի Չեխական ընկերությունների ռեգիստրում՝ որպես ֆիզիկական անձ, գրանցման ձևաթղթի հետ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը. աշխատանքային արտոնագիրը, ձեռնարկատիրության վայրի օրինական շահագործման մասին վկայականը, չեխական 5000 կրոնի (195 եվրոյի) չափով դատարանական վարձավճար և ստորագրության հաստատումը:

Այս նույն նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվությունը կարող է շնորհվել երկու տարվա ժամկետով: Համապատասխանաբար՝ աշխատանքային արտոնագիրը ևս կտրվի նույն ժամկետով:

<u>Սեզոնային աշխատանք</u>

Սեզոնային աշխատանքի վերաբերյալ չեխական օրենսդրությունը չի սահմանում որոշակի նախապայմաններ: Այդպիսիք չկան նաև Օտարերկրացիների մասին ակտում, ոչ էլ Աշխատանքային ակտում: Աշխատանքի թույլտվությունը միշտ շնորհվում է համաձայն ստանդարտ գործընթացի, այն տարբերությամբ միայն, որ տվյալ դեպքում դրա վավերության ժամկետը կարող է ավելի կարճ լինել՝ մինչև մեկ տարի: Ինչ վերաբերում է երկրում գտնվելու թույլտվությանը, ապա կարող է տրվել

կարճաժամկետ՝ մինչև 90 օր ժամկետով վիզա, եթե «սեզոնի» տևողությունը չի գերազանցում 3 ամիսը: Ինչևէ, սա այնքան էլ հաճախ չի կիրառվում, քանի որ աշխատանքի թույլտվություն ստանալու գործընթացը բավական բարդ է, որպեսզի ձեռնարկվի ընդամենը երեք ամսվա համար: Չեխիայի աշխատաշուկան սեզոնային աշխատուժի պահանջը բավարարում է (եթե այն բավարարված չէ Չեխիայի քաղաքացիների միջոցով) երրորդ երկրների՝ արդեն Չեխիայի Հանրապետությունում բնակվող քաղաքացիների հաշվին:

Գումարային փոխանցումները այդ անձանց հպատակության երկիր հիմնականում կատարվում են «Վեսթերն Յունիոնի» միջոցով կամ մասնավոր ճանապարհներով (օրինակ՝ ավտոբուսային ընկերությունների կամ մասնավոր անձանց միջոցով): Բանկային սեկտորի ընդգրկվածությունը նշանակալի չէ, քանի որ Չեխիայի Հանրապետությունում դրսից եկած աշխատուժը հիմնականում կազմում են ԱՊՀ երկրների քաղաքացիները, իսկ այդ երկրներում բանկային համակարգը տակավին չի ընդգրկում երկրի ողջ տարածքը: Միգրացիայի և զարգացման առնչությամբ տեղի է ունեցել քննարկում (այլ խոսքով՝ միջ-նախարարական հանդիպում, ինչի մասին տեղեկացրել է Ֆինանսների նախարարությունը) Չեխիայի Հանրապետությունից դրամական փոխանցումների վերլուծության ծրագրի մասին: Նախարարությունն այս առնչությամբ տեղեկություններ և այլ երկրներից նման վերլուծություն տրամադրելու խնդրանքով դիմել է Միգրացիայի միջազգային կազմակերպությանը:

ա) Այլերկրացի աշխատողների մուտքը և երկրում գտնվելը

Ցանկացած օտարերկրացի կարող է աշխատել Չեխիայի Հանրապետությունում, պայմանով, որ ունենա աշխատելու վավեր թույլտվություն և աշխատանքային վավեր երկարաժամկետ վիզա՝ տրված աշխատաշուկայի հետազոտության տվյալների հիման վրա, այսինքն՝ եթե գործատուն չի կարողացել տվյալ աշխատանքի համար գտնել համապատասխան որակավորմամբ Չեխիայի կամ ԵՏՏ քաղաքացի:

❖ Աշխատել ցանկացողների աշխատանքային թույլտվությունը

Այլերկրացի աշխատողը պետք է դիմի աշխատանքի թույլտվություն ստանալու համար: Սա սովորաբար արվում է ապագա գործատուի հետ համագործակցությամբ, նախքան իր՝ Չեխիայի Հանրապետություն ժամանելը:
http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/tiskopisy/us!zc_o_povoleni_k_zamest_0.pdf.
Աշխատանքի թույլտվության համար կարելի է դիմել գրավոր, Չեխիայի՝ աշխատանքի տեղավորման համապատասխան գրասենյակ: Գործընթացում դիմողին կարող է ներկայացնել գործատուն կամ որևէ այլ արտոնված ներկայացուցիչ:
Դիմումը պետք է ներառի.
- Գործատուի հավաստումը, որ պատրաստ է տվյալ անձին ընդունել աշխատանքի
http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/tiskopisy/us!vyjadreni_zamestnavatele_0.pdf
- Դիմողի մասնագիտական վկայականի, բուհի վկայականի կամ համալսարանական դիպլոմի՝ նոտարի կողմից վավերացված պատճենը
- Բժշկական տեղեկանք՝ առողջական վիճակի մասին (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության)
Աշխատանքի թույլտվությունն ուժի մեջ է միայն դրանում նշված գործատուի, աշխատանքի տեսակի և վայրի համար:
Այս առնչությամբ այլ ձևաթղթերի մասին կարելի է տեղեկանալ http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/tiskopisy կայքից:
Աշխատանքի թույլտվության համար դիմելուց անմիջապես հետո այլերկրացին կարող է դիմել նաև աշխատանքային երկարաժամկետ վիզա ստանալու համար: Այս երկու գործընթացները կարող են միաժամանակ ընթանալ: Պարզապես երկարաժամկետ վիզայի համար դիմելիս պետք է հայտնել աշխատանքի թույլտվության դիմումի գրանցման համարը և, թե Աշխատանքային բորսայի որ գրասենյակ է ուղարկվել դիմումը: Երկարաժամկետ վիզայի (D) համար դիմելու մանրամասները տե՛ս վերը:

- **Աշխատանքի թույլտվություն՝ աշխատաշուկայում իրավիճակի հիման վրա**

Աշխատաշուկայում իրավիճակի հիման վրա (գործատուն պետք է Աշխատանքի գրասենյակից թույլտվություն ունենա արտասահմանից աշխատողներ ներգրավելու համար) աշխատանքի թույլտվությունը կարող է շնորհվել այլերկրացուն՝ օրացուցային տարում վեց ամսվա տևողությամբ սեզոնային աշխատանքի համար, եթե նախորդ և ներկայիս աշխատանքների միջև առնվազն վեց ամսվա դադար կա:

- **Աշխատանքի թույլտվություն՝ անկախ աշխատաշուկայի իրավիճակից**

Աշխատաշուկայի իրավիճակից անկախ (գործատուն արտասահմանից աշխատող ներգրավելու թույլտվության կարիք չունի) աշխատանքի թույլտվություն կարող է շնորհվել այլերկրացուն, եթե նա.

- Որևէ համալսարանի կամ գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող/հետազոտող է,
- Աշխատելու է սահմանված ժամկետով (բայց որը չի գերազանցում մեկ տարին)՝ կոնկրետ մասնագիտական ոլորտում մասնագիտական կարողությունները/որակավորումը բարձրացնելու նպատակով (ինտերնատուրա): Այս ժամկետը կարող է երկարացվել, սակայն ոչ ավելի, քան անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական որակավորումը ձեռք բերելու համար,
- Պատկանում է մինչև 26 տարեկան տարիքային խմբին և երիտասարդական կամ փոխանակման ծրագրերի շրջանակներում, որոնց մասնակից է նաև Չեխիայի Հանրապետությունը, կատարում է դիպվածային կամ ժամկետային աշխատանք,
- Չեխիայի Հանրապետությունում գրանցված եկեղեցու կամ կրոնական կազմակերպության հոգևորական է,
- Ում առնչությամբ գործում է միջազգային համաձայնագիր, որը վավերացված է Խորհրդարանի կողմից և որին ենթակա է նաև Չեխիայի Հանրապետությունը,

- Քաղաքական ապաստան է հայցել և ստացել է երկրում գտնվել թույլատրող վիզա, սակայն ոչ ավելի վաղ, քան փախստականի կարգավիճակի համար դիմում ներկայացնելուց 12 ամիս հետո,
- Ընտրվել կամ նշանակվել է որևէ պաշտոնում: Այս դեպքում գործատուն պետք է գրավոր հավաստի, որ տվյալ պաշտոնը զբաղեցվել է ընտրությամբ կամ նշանակմամբ:

Ովքեր աշխատանքի թույլտվության կարիք չունեն

Աշխատանքի թույլտվության կարիք չունի այն այլերկրացին, ով.
ա) Չեխիայի Հանրապետությունում ունի փախստականի կարգավիճակ,
բ) Չեխիայի Հանրապետությունում ունի մշտական բնակության թույլտվություն,
գ) Դիվանագիտական առաքելության կամ հյուպատոսական ներկայացուցչության անդամի ընտանիքի անդամ է, կամ Չեխիայի Հանրապետությունում տեղակայված նստավայրով՝ միջազգային կառավարական կազմակերպության աշխատակցի ընտանիքի անդամ է, եթե փոխադարձությունը երաշխավորված է Չեխիայի Կառավարության կողմից ստորագրված միջազգային պայմանագրով,
դ) Հանդիսանում է՝

- Կատարող արվեստի գործիչ,
- Մանկավարժական ոլորտի աշխատող,
- Համալսարանի գիտական աշխատակից
- Գիտաժողովի մասնակից գիտնական,
- 26 տարին չբոլորած՝ աշակերտ կամ ուսանող,
- մարզիկ,
- անձ, ով ապահովում է ապրանքի կամ ծառայությունների մատակարարումը, կամ ապրանք և ծառայություններ է մատակարարում Չեխիայի Հանրապետություն,
- Առևտրական պայմանագրով հավաքման, երաշխիքային սպասարկման կամ նորոգման աշխատանք իրականացնող, ում Չեխիայի Հանրապետությունում գտնվելու ժամկետը չի գերազանցի օրացուցային 7 հաջորդական օրը կամ օրացուցային տարվա ընթացքում գումարային 30 օրը,

ե) Չեխիայի Հանրապետությունում միջազգային պայմանագրով աշխատող, որը վավերացված է Խորհրդարանի կողմից և որին ենթակա է Չեխիայի Հանրապետությունը,
զ) Փրկարարական թիմի անդամ, ով վթարների կամ բնական աղետների հետևանքների վերացման մասին փոխօգնության միջպետական համաձայնագրով աջակցություն կամ հումանիտար օգնություն է տրամադրում,
է) Միջազգային զանգվածային փոխադրամիջոցների կազմակերպության աշխատակից, եթե Չեխիայի Հանրապետություն է ուղարկված իր երկրի գործատուի կողմից՝ ինչ-որ աշխատանք իրականացնելու նպատակով,
ը) Լրագրողի հավատարմագիր ունեցող,
թ) Ուղարկող երկրի զինված ուժերի զինվորական կամ քաղաքացիական ծառայող՝ հատուկ կարգավիճակով,
ժ) Դպրոցներում կամ դպրոցական, ինչպես նաև նախադպրոցական համակարգի մաս կազմող այլ հիմնարկներում իր հետագա աշխատանքի համար նախապատրաստական աշխատանք իրականացնող,
ի) Եվրոմիության անդամ այլ երկրում գրանցված գործատուի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում Չեխիայի Հանրապետություն գործուղված,
լ) Վերը նշված ա) և գ) կետերի համատեքստում ընտանիքի վերամիավորման նպատակով Չեխիայի Հանրապետությունում երկարաժամկետ բնակության թույլտվությամբ բնակվող այլ երկրի քաղաքացի,
խ) ԵՄ անդամ այլ պետության բնակչին աշխատանքի նպատակով տրվող երկարաժամկետ բնակության թույլտվության հիման վրա Չեխիայի Հանրապետությունում բնակվող, եթե թույլտվության շնորհումից անցել է ավելի քան 12 ամիս,
ծ) Չեխիայի Հանրապետությունում համապատասխան հատուկ օրենքով որևէ համալսարանում սիստեմատիկ կրթական կամ գիտահետազոտական աշխատանք իրականացնող, կամ հանրային հետազոտական հիմնարկում կամ հետազոտական այլ կազմակերպությունում գիտական, հետազոտական կամ մշակման աշխատանք իրականացնող,
կ) Միջնակարգ կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող կամ կրթական օրենքի համաձայն՝ կոնսերվատորիայի բարձրագույն

կրթություն ունեցող, կամ Համալսարանների մասին օրենքի համաձայն՝ համալսարանական կրթություն ունեցող,
h) Ընտանիքի միավորման նպատակով երկարաժամկետ բնակության վիզա ունեցող և Չեխիայի Հանրապետությունում բնակվող անձ, եթե խոսքը վերաբերում է այն այլերկրացու՝ ընտանիքի հետ միավորմանը, ով կամ Չեխիայում կամ ԵՄ անդամ այլ պետությունում ունի Եվրոմիությունում երկարաժամկետ բնակվողի կարգավիճակ և ով այդ բնակության ընթացքում աշխատանքի թույլտվությամբ առնվազն 12 ամիս աշխատել է Չեխիայի Հանրապետությունում:

բ) Աշխատանքի շուկայի՝ աշխատուժի պահանջարկ ունեցող հատվածները

Չեխիայի Հանրապետությունում առկա է տեխնոլոգիայի և շինարարության բնագավառի ինժեներ-մեխանիկների, ծրագրավորման ինժեներների, բարձր որակավորմամբ՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետների, սպասարկման ոլորտի մասնագետների, տվյալների բազաներ մշակողների, ձեռնարկատիրության մասնագետների, բարձրակարգ մենեջերների, բարձրակարգ վարչական աշխատողների և վաճառքի ներկայացուցիչների (մասնավորապես դեղագործական արտադրանքի վաճառքի գծով փորձառու ներկայացուցիչների) պահանջարկ:
Առկա է նաև բուժանձնակազմի, մասնավորապես՝ բարձր որակավորմամբ բուժքույրերի, ատամնաբույժների, ներքին հիվանդությունների մասնագետների, անեսթեզիոլոգների, գինեկոլոգների և մանկաբարձների, պաթոլոգների և մանկաբույժների պահանջարկ: Բացի այս, բավական թափուր տեղեր կան շինարարության և արտադրության ոլորտներում:

գ) Աշխատանքի որոնման կայքէջեր

Չեխիայի Հանրապետությունում աշխատանք փնտրող այլերկրացիների համար գոյություն ունի հատուկ կայքէջ: Ձեր աշխատանքային գործունեության մասին տվյալները (ռեզյումեն) կարող եք տեղադրել http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/prociz/cv կայքում (միայն չեխերենով), և

այն իսկույն կեթ հասու կլինի Չեխիայի Հանրապետության գործատուներին: Վերոհիշյալ կայքէջը նաև այլերկրացիներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Չեխիայի Հանրապետությունում թափուր աշխատատեղերի վերաբերյալ տվյալներին: Տվյալների բազայում ընդգրկված են Չեխիայի Հանրապետության բոլոր Աշխատանքային բորսաների տվյալները: Որոնումը ավտոմատ կերպով ի ցույց է բերում այլերկրացիների համար բոլոր թափուր աշխատատեղերը, այսինքն՝ այն աշխատատեղերը, որոնց համար գործատուին շնորհված է արտասահմանից աշխատողներ վարձելու թույլտվություն:

Այլերկրացիների համար թափուր աշխատատեղերի տվյալների բազա (Չեխիայի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն).

http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/prociz/vmciz

Յուրաքանչյուր դիմող կարող է նաև աշխատանք որոնել Չեխիայի Աշխատանքային բորսայում: Աշխատանքային բորսայի գրասենյակները գրանցում են Չեխիայի Հանրապետության ողջ տարածքում առկա թափուր աշխատատեղերը: Թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները ներկայացված են Աշխատանքային բորսայի գրասենյակների հայտարարությունների բաժնում՝ (http://portal.mpsv.cz/sz/local):

Յուրաքանչյուր այլերկրացի կարող է նաև օգտվել ԱՍՀ նախարարության կողմից արտոնված՝ Աշխատանքի տեղավորման գործակալությունների ծառայություններից: Արտոնված գործակալությունների վավեր և թարմացված ցանկը կարող եք գտնել http://portal.mpsv.cz/sz/zamest/zpr_prace կայքում (միայն չեխերենով): Պետք է որոնեք այն գործակալությունների ցանկում, որոնք այլերկրացիների համար աշխատանք գտնելու արտոնագիր ունեն. “Předmět povolení” բաժնում նշեք վերից երկրորդ հատվածը՝ “Na území ČR - cizinci podle § 60/1b ”, ապա սեղմեք HLEDEJ (որոնում) բառի վրա:

Կարող եք որոնել նաև հավաքագրման մասնավոր գործակալությունների թափուր աշխատատեղերի ցանկերում.

www.eurec.cz

www.cvonline.cz

www.jobs.cz

www.jobpilot.cz

www.prace.cz
www.dobraprace.cz
www.kariera.cz
www.hotjobs.cz/
www.jobmaster.cz/
www.joblist.cz/
www.qjobs.cz/
www.volna-mista.cz/
www.inzerce.idnes.cz
www.careerjet.cz/
www.zamestnani.cz/
և այլ.
http://odkazy.seznam.cz/Informacni-a-inzertni-servery/Inzertni-servery-a-online-bazary/Online-vyhledavace-prace/

դ) Խնամողի և այլ՝ հիմնականում օտարերկրացիներին հասցեագրված աշխատանքային ծրագրեր

Այլերկրացի՝ մասնագիտական որակավորմամբ աշխատողների ընտրության փորձնական ծրագիր

- Ընտրված՝ որակավորում ունեցող աշխատողներին հնարավորություն է ընձեռվում ավելի կարճ ժամկետում դիմելու մշտական բնակության համար՝ մեկուկես տարի (բարձր որակավորում ունեցող աշխատողներ) կամ երկուսուկես տարի (ստանդարտ որակավորում ունեցողներ) անընդմեջ բնակվելուց և աշխատելուց հետո: Բարձր որակավորում ունեցողներ են համարվում փորձնական ծրագրի այն մասնակիցները, ովքեր ունեն համալսարանական կրթություն և կատարում են համալսարանական կրթություն պահանջող և իրենց մասնագիտական որակավորմանը (կրթություն կամ աշխատանքային փորձ) համապատասխանող աշխատանք:
- Ծրագրի մասնակիցների հետ, նրանց ընտանիքի անդամներին նույնպես թույլատրվում է բնակություն հաստատել Չեխիայի

Հանրապետությունում և ստանալ մշտական բնակության իրավունք:

- 2010 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ծրագրի այն մասնակիցներին, ովքեր ծրագրի առաջին տարում ոչ իրենց մեղքով կորցնում են աշխատանքը, շնորհվում է լրացուցիչ 60 օր, որի ընթացքում նրանց վիզան չի կորցնում վավերությունը և նրանք չեն զրկվում բնակության թույլտվությունից: Այս վերոհիշյալ 60-օրյա ժամկետի նպատակը մասնակիցներին երկրում այլ աշխատանք փնտրելու հնարավորություն տալն է: Փորձնական ծրագրի հաջորդ տարիների ընթացքում ևս մասնակիցներին հավելյալ ժամկետ է շնորհվում, եթե նրանք այլևայլ պատճառներով կորցնում են աշխատանքը:
- Այս ծրագրում կարող են ընդգրկվել հետևյալ երկրների քաղաքացիները.

Ադրբեջան, Ալբանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ավստրալիա, Արգենտինա, Բելառուս, Բիրմա, Բոսնիա և Հերցեգովինա, Բրազիլիա, Գվատեմալա, Թաիլանդ, Թուրքիա, Թուրքմենստան, Ինդոնեզիա, Իսրայել, Լաոս, Խորվաթիա, Կամբոջիա, Կանադա, Կոստա Ռիկա, Կորեայի Հանրապետություն, Կուբա, Հայաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Հնդկաստան, Հոնդուրաս, Ղազախստան, Ղրղզստան, Ճապոնիա, Մակեդոնիայի Հանրապետություն (ՆՀՄՀ), Մալայզիա, Մեքսիկա, Մոլդովա, Մոնտենեգրո, Նեպալ, Նոր Զելանդիա, Նիկարագուա, Շրի Լանկա, Չիլի, Պանամա, Պարագվայ, Ռուսաստանի Դաշնություն, Սալվադոր, Սերբիա, Սինգապուր, Վրաստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Ուրուգվայ, Ֆիլիպիններ:

_ Ինչպես նաև Չեխիայի որևէ համալսարան 1995 թվականին և դրանից հետո ավարտած անձինք՝ անկախ երկրից (բացառությամբ նրանց, ովքեր Չեխիայում ուսանել են իրենց քաղաքացիության երկրներին տրամադրված՝ զարգացմանն աջակցող ծրագրերով),

_ Չեխիայում միջնակարգ դպրոց ավարտած անձինք՝ անկախ երկրից, ովքեր դպրոցն ավարտել և ավարտական քննություն են հանձնել 2000 թվականին և դրանից հետո,

- ➢ Դիմողները պետք է լինեն միջնակարգ դպրոց ավարտած,

- Դիմողները պետք է օրինական աշխատանք գտնեն Չեխիայի Հանրապետությունում,
- Դիմողները պետք է հավաքեն առնվազն 25 միավոր՝ տարբեր չափանիշներ արտացոլող համակարգչային ընտրական գործընթացով (որակավորում, փորձ, լեզվական հմտություններ, ընտանեկան կարգավիճակ և այլն):

Հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ http://www.imigracecz.org հասցեով կամ դիմելով ձեր երկրի՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության գրասենյակ:

Չեխական «գրին քարտի» ծրագիրը

- «Գրին քարտի» ծրագիրը հասցեագրված է հետևյալ երկրների քաղաքացիներին. Ավստրալիա, Մոնտենեգրո, Խորվաթիա, Ճապոնիա, Կանադա, Կորեայի Հանրապետություն, Նոր Զելանդիա, Բոսնիա և Հերցեգովինա, Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Ուկրաինա:
- «Գրին քարտ» ծրագրին մասնակցելու համար դիմել կարող են միայն այն երկրների քաղաքացիները, որոնց հասցեագրված է ծրագիրը: Չեխիայի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) պորտալում կա առաջարկվող աշխատատեղերի կենտրոնացված ցանկ, որից այլ երկրների քաղաքացիները կարող են տեղեկություններ քաղել աշխատանքային տարատեսակ հնարավորությունների և պահանջարկների մասին: Այլերկրացի շահագրգիռ քաղաքացիները պետք է կապվեն աշխատատեղը հայտարարագրած գործատուի հետ՝ միաժամանակ Չեխիայի Հանրապետությունում «Գրին քարտի»՝ հատուկ դեպքերի համար երկարաժամկետ բնակության թույլտվության դիմում ներկայացնելով:
- Աշխատատեղի ընտրություն կատարած՝ այլ երկրի քաղաքացին պետք է դիմումի ձևաթուղթը տպի ԱՍՀՆ պորտալից և ձեռքով լրացնի: Դիմումի ձևաթուղթը լրացնելուց և ստորագրելուց հետո դիմողն այն այլ

անհրաժեշտ փաստաթղթերին կից ներկայացնում է դեսպանատուն: Դիմումն ընդունելուց հետո դեսպանատունը դիմողի՝ տվյալների բազայից ընտրած աշխատատեղի վրա արգելք է դնում, որպեսզի որևէ մեկ այլ ոք նույն տեղի համար չդիմի: Դիմումին կից պարտադիր ներկայացվող փաստաթղթերն են.

- Ճամփորդական փաստաթուղթ (որի վավերության ժամկետը պետք է նվազագույնը 90 օրով գերազանցի տվյալ անձի՝ Չեխիայում գտնվելու ակնկալվող ժամկետը)
- 2 լուսանկար
- Կրթությունը կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթեր

➢ Դիմումին կից կարող է ըստ ցանկության ներկայացվել.

- բժշկական տեղեկանք այն մասին, որ տվյալ անձը չունի որևէ լուրջ առողջական խնդիր,
- ոստիկանությունից տրվող տեղեկանքի նմանությամբ տեղեկանքներ, ինչպես իր քաղաքացիության պետությունից, այնպես էլ այն պետություններից, ուր տվյալ անձը 6 ամսից ավելի երկար բնակություն է ունեցել:

➢ Երկարաժամկետ բնակության թույլտվության («Գրին քարտի») վավերության ժամկետը «Գրին քարտի» A և B կարգերի համար կարող է շարունակաբար երկարացվել՝ աշխատանքի տևողության (աշխատանքային պայմանագրով սահմանված) ողջ ընթացքի համար, բայց ոչ ավելի, քան 3 տարով: Այս գործընթացը չի վերաբերում C կարգին:

Հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ Չեխիայի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պորտալից՝ http://portal.mpsv.cz/sz/zahr_zam/zelka հասցեով:

3. Ներգաղթ ուսման նպատակով

Ուսումնառության նպատակով բնակության թույլտվության միակ տեսակը «Ուսման նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվությունն» է, որը շնորհվում է առավելագույնը մեկամյա ժամկետով և կարող է

երկարացվել: Օտարերկրյա ուսանողը պետք է նախ որևէ համալսարան կամ հայտնի բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված լինելու փաստաթուղթ ունենա: Այս փաստաթուղթն ունենալով, արդեն կարող է դիմում ներկայացնել դեսպանատուն: Դիմումին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը. համալսարանի կամ այլ ընդունող կազմակերպության հաստատումը, անհրաժեշտ լուսանկարները և ճամփորդական փաստաթղթերը, բավարար դրամական միջոցների առկայության հաստատումը կամ ընդունող կազմակերպության՝ աջակցություն տրամադրելու գրավոր հավաստումը, բնակարանային պայմանների առկայության հաստատումը, ոստիկանության տեղեկանքի պատճենը, եթե ուսանողն անչափահաս է՝ Չեխիա ժամանելու առնչությամբ ծնողի համաձայնությունը, ինչպես նաև ճամփորդական բուժապահովագրության վկայականը: Դեսպանատան պահանջով՝ ուսանողը պետք է ներկայացնի նաև բժշկական տեղեկանք և/կամ իր քաղաքացիության երկրի ոստիկանությունից տեղեկանք՝ քրեական պատասխանատվության ենթարկված լինել/չլինելու վերաբերյալ:

Բնակության այս կարգի թույլտվություն ստացած՝ երրորդ երկրների քաղաքացիներն իրենց ուսումնառության ընթացքում աշխատել կարող են միայն, եթե նրանց շնորհվել է անհատական աշխատանքային թույլտվություն: Ուսումնառությունն ավարտելով՝ նրանք կարող են, առանց Չեխիայի Հանրապետության տարածքը լքելու, դիմել՝ փոխելու բնակության նպատակը:

ա) Չեխիայի կրթական համակարգը

Չեխիայի Հանրապետությունում կրթական համակարգը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

- Նախադպրոցական մակարդակ (մանկապարտեզ)
- տարրական դպրոց
- միջնակարգ դպրոց
    - գիմնազիա
    - միջնակարգ մասնագիտական դպրոց
    - միջնակարգ վերապատրաստման կենտրոն

- լեզվի դպրոցներ՝ դպրոցական ավարտական քննություններից հետո (աշակերտները պետք է հանձնեն լեզվից պետական քննությունը)
- կոնսերվատորիաներ
- քոլեջներ
- բարձրագույն կրթական հաստատություններ
  - համալսարաններ
  - միջին բարձրագույն կրթական հաստատություններ
- հատուկ կրթություն

Օտարերկրացիների կրթության պայմանները կարգավորվում են Կրթության մասին ակտով: Կրթության առումով Եվրոմիության երկրների քաղաքացիներն օգտվում են նույն իրավունքներից, ինչ Չեխիայի Հանրապետության քաղաքացիները: Երրորդ երկրների քաղաքացիները կարող են Չեխիայի Հանրապետությունում ստանալ միջնակարգ և երրորդ մակարդակի կրթություն, եթե ամենաուշը ուսումնական տարվա սկզբին ներկայացնեն երկրում գտնվելու օրինականությունը վկայող փաստաթղթեր:

Տարրական կրթությունը պարտադիր է և անվճար: Պարտադիր կրթության հնարավորությունից օգտվելու համար օտարերկրացին պետք է ներկայացնի Չեխիայում բնակության թույլտվություն: Եվրոմիության անդամ պետությունների քաղաքացիները կարող են մասնակցել անվճար դասընթացների, ներառյալ՝ չեխերենի դասերը: Այս հնարավորությունն ուժի մեջ չէ երրորդ երկրների քաղաքացիների համար: Ապաստան հայցողների երեխաների համար նախատեսվում է չեխերենի դասընթաց:

Կրթության նախարարությունն ուղեցույց է հրապարակել օտարերկրացիների՝ միջնակարգ դպրոցներում և քոլեջներում ուսանելու պայմանների վերաբերյալ: Պայմանները հետևյալն են.

- երկրում գտնվելու օրինականություն (ներառյալ ապաստան հայցողները, ժամանակավոր պաշտպանության ներքո գտնվողները և երկրում մնալու թույլտվություն ունեցողները): Օրինականությունը հավաստող փաստաթղթերը հանձնվում են դպրոցի տնօրենին՝ ուսումնական առաջին օրը, կամ կցվում են միջնակարգ դպրոցում սովորելու դիմումին,
- չեխերենի իմացություն (տարրական կրթությունն իրականացվում է բացառապես չեխերենով, դպրոցները պարտավոր չեն

օտարերկրացիների համար չեխերենի կամ որևէ այլ հատուկ պարապմունքներ կազմակերպել: Միջնակարգ դպրոցի ընդունելության քննությունները ևս բացառապես չեխերենով են, սակայն տնօրենի որոշմամբ չեխերենի քննությունը կարող է փոխարինվել հարցազրույցով),

- այլ (ընդունելության քննության հանձնում, կամ այլ՝ կրթության ճանաչված վկայականի կամ դիպլոմի ներկայացում):

Օտարերկրյա ուսանողները կարող են ուսանել պետական կամ մասնավոր բարձրագույն դպրոցներում՝ անկախ այն բանից, թե Չեխիայի Հանրապետությունում նրանց բնակության թույլտվությունը կարճաժամկետ է, երկարաժամկետ, թե մշտական: Օտարերկրացիների համար բարձրագույն դպրոցներում ուսանելու պայմանները նույնն են, ինչ Չեխիայի Հանրապետության քաղաքացի ուսանողներինը, սակայն պայմանով, որ նրանք ի վիճակի են ուսանել չեխերենով: Այսպիսով, եթե Չեխիայի քաղաքացի ուսանողներից չի պահանջվում վճարել ուսման համար, նույնը վերաբերում է նաև օտարերկրացի ուսանողներին:

Չեխիայի բարձրագույն դպրոցներում այլ լեզվով ուսանել ցանկացող օտարերկրացիները պետք է այդ ուսման համար վարձ վճարեն: Մասնավոր բարձրագույն դպրոցներում բոլոր ուսանողները պետք է ուսման վարձ վճարեն՝ այս առումով կարգը նույնն է թե՛ օտարերկրյա, թե՛ չեխ ուսանողների համար:

Հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/education հասցեով:

բ) Ուսանողների երկիր մուտք գործելու և մնալու կարգը

Եթե ցանկանում եք Չեխիայի Հանրապետությունում երեք ամսից ավելի երկար ուսանել, պետք է դիմեք ուսման նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվություն ստանալու համար: Ուսումը ներառում է, օրինակ, լեզվի և մասնագիտական նախապատրաստական դասընթացներ (համալսարանում ուսանելուն նախորդող), Եվրոմիության ծրագրի կամ միջազգային համաձայնագրի շրջանակներում կազմակերպված՝ լեզվի դասընթացներ, փորձի փոխանակում, կամ ուսուցողական ուղևորություններ կրթության և մարդկային ռեսուրսների

զարգացման պատասխանատու անձանց համար (միայն Եվրոմիության ծրագրերի շրջանակներում), և այլն:
Պայմանը չի վերաբերում. տարրական կամ միջնակարգ դպրոցում, կամ կոնսերվատորիայում ուսանելուն, որը չի իրականացվում փոխանակման կամ մասնագիտական փորձի փոխանակման ծրագրի շրջանակներում:
Դիմումը կարող է ներկայացվել դեսպանատուն:
Դիմումին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը կարող եք գտնել http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/residence-in-the-czech-republic/239 հասցեով:

գ) Բարձրագույն կրթության և ասպիրանտական կրթաթոշակներ

Չեխիայի Հանրապետության Կրթության, սպորտի և երիտասարդության նախարարությունը, համաձայն միջազգային համաձայնագրերի, որոնց անդամակից է նաև Չեխիան, նույնպես սահմանել է կրթաթոշակներ: Միջազգային համաձայնագրերի հիման վրա շնորհվող կրթաթոշակների թարմացված ցանկը հրապարակում է Ակադեմիական տեղեկատվության գործակալությունը. http://www2.dzs.cz/scripts/detail.asp?id=155

<u>Մասարիկի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը</u>
Մասարիկի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի (www.muni.cz) դեկանը շնորհում է վեց, իսկ Չեխերեն լեզվի ինստիտուտը՝ երկու եռամսյա կրթաթոշակներ, ամսական 4500 չեխական կրոն գումարով, այն անձանց, ովքեր ցանկանում են ուսանել չեխերեն, չեխ գրականություն և մշակույթ: Այս կրթաթոշակները տրվում են հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար և հասցեագրված են վերոնշյալ ոլորտով հետաքրքրված ուսանողներին: Դիմողները պետք է ունենան չեխերենի իմացության բավարար մակարդակ՝ չեխերենով վարվող դասախոսություններին ու դասընթացներին լիարժեք մասնակցելու համար: Կրթաթոշակը չի ծածկում առողջական ապահովագրությունը:
Տվյալ ուսումնական տարվա համար դիմումները պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան ապրիլի 30-ը: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք http://www.phil.muni.cz/studium/infoforeignstud.html#_Grants_and_scholarships կայքը:

դ) հիմնական համալսարանների և քոլեջների ցանկը

տե՛ս http://www.unesco.org/iau/onlinedatabases/list.html կայքում:

ե) ծրագրեր օտարերկրացի ուսանողների համար

Բիզնեսի, հումանիտար և բնական գիտությունների, իրավունքի, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրեր Պրահայում.
http://www.aac.edu/
Միջազգային բիզնեսի, միջազգային և ԵՄ առևտրի և տնտեսագիտության մագիստրատուրայի, դոկտորանտուրայի ծրագրեր Պրահայում.
http://www.vse.cz/index-en.php?lang=en
Հումանիտար գիտությունների ծրագրեր Պրահայում.
http://www.studiesabroad.com/programs/country/czech_republic/city/prague/duration/97
Երաժշտության, լրագրության կամ տնտեսագիտության ծրագրեր Պրահայում. http://www.nyu.edu/studyabroad/prague/academics.html
Միջազգային բիզնեսի և մարքետինգի ծրագիր Պրահայում.
http://www.goesac.com/
Ճարտարապետության և ճարտարապետության պատմության, արվեստի և արվեստի պատմության, չեխերենի, տնտեսագիտության, կինեմատոգրաֆիայի, գենդերային հետազոտության, պատմության, գրականության, գրաքննադատության/ համեմատական գրականության, երաժշտության, քաղաքականության, հոգեբանության, կրոնի և աստվածաբանության, ինչպես նաև հասարակագիտության ոլորտների ակադեմիական ծրագրեր Պրահայում.
http://www.ciee.org/program_search/program_detail.aspx?program_id=67&type=part
«Մեկ կիսամյակ Եվրոպայում» ծրագիր՝ բիզնեսի, արվեստի պատմության կամ Եվրոմիության ոլորտում՝ Եվրոպայի տարբեր քաղաքներում. http://www.globalsemesters.com/Europe.html?utm_source=ga.com&utm_medium=database&utm_term=SemEurope
Եբրայերենի ուսանում Պրահայում.
http://www.cetacademicprograms.com/index.cfm?FuseAction=Programs.ViewProgram&Program_ID=06067374764F71750072777107071C700C7D74

140F0A70036E06050707727607757773767607017501&Type=O&sType=O&Link_ID=4E1D468C-0315-3129-98B3CE7501D5AC66
Կենտրոնական Եվրոպայի ուսումնասիրության բակալավրիատի ծրագիր.
http://www.cerge-ei.cz/abroad/ (Պրահա)
http://www.rect.muni.cz/cesp/ (Բռնո)

4. Բնակությունը

Իրավասու իշխանությունները

Ընդհանուր առմամբ բոլոր նորեկները պետք է բնակության թույլտվության իրենց դիմումները հանձնեն Չեխիայի Հանրապետության տարածքից դուրս գտնվող՝ Չեխիայի Հանրապետության դեսպանատուն կամ հյուպատոսական ներկայացուցչություն: Ի լրումն, Եվրոմիության անդամ երկրներում Չեխիայի դեսպանատները դիմողի՝ հենց տվյալ երկրում բնակության թույլտվության վավերությունը ստուգելու քաղաքականություն ունեն: Եթե դիմողը տվյալ երկրում գտնվելու օրինական իրավունք չունի, դեսպանատունը նրա դիմումը չի ընդունի: Այնուհանդերձ, Չեխիայի ներկայիս օրենսդրությունը չունի այստեսակ գործունեության իրավական հիմք:
Երրորդ երկրների քաղաքացիների՝ բնակության թույլտվության դիմումների վերաբերյալ մեծամասամբ որոշում կայացնողը Չեխիայի Հանրապետության՝ Օտարերկրացիների հարցերով և սահմանային ոստիկանությունն է: Տարածքային մակարդակով Աշխատանքային գրասենյակները (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության) պատասխանատու են աշխատանքի թույլտվություն շնորհելու գործընթացի համար:

Գործընթացային քայլեր՝ ինչպիսի պայմաններ պիտի բավարարվեն

Շնչին բացառությամբ՝ բնակության թույլտվության համար դիմելու գործընթացը և պահանջվող փաստաթղթերը նույնն են թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական բնակություն հայցելիս:
Վիզաների շնորհման համար գրեթե միևնույն պահանջներով բնակության թույլտվության համար բոլոր դիմողները, լրացված պաշտոնական դիմումածևի հետ պետք է ներկայացնեն. վավեր անձնագիր կամ այլ ճամփորդական փաստաթուղթ, երկու անձնագրային չափսի լուսանկար,

բնակվելու տեղի առկայության հիմնավորում, քաղվածք Չեխիայի Հանրապետության քրեական ռեգիստրից, ինչպես նաև չեխական 1000 կրոնի (36 եվրոյի) չափով վարչական վարձավճար: Որոշ դեպքերում կարող է նաև պահանջվել դիմողի երկրից բժշկական տեղեկանք և քաղվածք ոստիկանությունից:
Բնակության թույլտվության դիմումների զգալի մասի համար պահանջվում է բավարար եկամուտ կամ ֆինանսական միջոցներ (ամսական եկամուտը կամ ֆիքսված գումար) փաստող տեղեկանք: Երկարաժամկետ բնակության, բիզնեսի կամ ուսման թույլտվության համար դիմողներից պահանջվում է ներկայացնել կայուն եկամտի մասին տեղեկանք: Աշխատանքի մեկնողները կարիք չունեն բավարար ֆինանսական միջոցների մասին տեղեկանք ներկայացնելու, քանի որ փոխարենը կարող են ներկայացնել իրենց աշխատանքային պայմանագիրը: Ընտանիքի միավորման նպատակով երկարաժամկետ բնակության և մշտական բնակության համար դիմողներից պահանջվող ֆինանսական փաստաթուղթը նրանց ամսական եկամտի մասին տեղեկանքն է:
Դիմումների մերժման առնչությամբ պատճառները նույնն են, ինչ վիզաների առնչությամբ:

Որոշումների վարչական և դատական վերահսկումը և բողոքարկումը

Ոստիկանության կամ Աշխատանքի և առևտրի արտոնագրման գրասենյակներից թույլտվության մերժում ստանալու պարագայում դիմողներին տրվում են ստանդարտ վարչական գործընթացային իրավունքներ, այն է՝ հասանելիություն անձնական թղթապանակին, պատճառաբանված որոշման իրավունք և բողոքարկման իրավունք: Երրորդ երկրի քաղաքացին կարող է 15 օրվա ընթացքում բողոքարկման դիմում ներկայացնել գերագույն վարչական մարմին (օրինակ՝ Օտարերկրացիների հարցերով և սահմանային ոստիկանություն կամ նախարարություն), որն իրավասու է փոխել որոշումը: Այս բողոքարկմամբ սովորաբար որոշումը կասեցվում է: Եթե վարչական բողոքարկումը չի բավարարվում, կարելի է դատական հայց ներկայացնել Վարչական դատարան:
Այս դեպքում դատարանն իրավունք ունի հայտարարելու, որ բողոքարկմամբ որոշումը կասեցվում է:

Գործնականում վարչական վերահսկումը բավական արդյունավետ է. Օտարերկրացիների հարցերով ոստիկանության պարագայում, Պրահայի կենտրոնական գրասենյակը շատ հաճախ շտկում է իրենց տարածքային գործընկերների թույլ տված խախտումները: Ի հակառակ սրա՝ դատական վերահսկումը դեռևս բողոքարկման արդյունավետ գործընթաց չի ցուցադրել:

Երկարաժամկետ բնակության թույլտվություն

Բնակության այսպիսի թույլտվության համար կարող եք դիմել, եթե 90-օրյա ժամկետը գերազանցող վիզայով գտնվում եք Չեխիայի Հանրապետության տարածքում և ցանկանում եք, առանց կացության նպատակը փոխելու, 1 տարուց ավելի տևողությամբ, ժամանակավորապես, շարունակել բնակությունը երկրի տարածքում:

Դիմումը կարող եք ներկայացնել Չեխիայի Հանրապետությունում ձեր բնակության վայրի՝ Օտարերկրացիների հարցերով ոստիկանության համապատասխան բաժանմունք:

Դիմումին կից ներկայացվող՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը կարող եք գտնել http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/residence-in-the-czech-republic/233 հասցեով:

Դիմումի ձևաթղթի համար այցելեք http://www.mvcr.cz/rady/formulare/cizinci/zadost2.pdf կայք:

Ուսման նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվություն

Այսպիսի թույլտվության համար կարող եք դիմել, եթե ցանկանում եք ուսման նպատակով ժամանակավորապես, 3 ամսից ավելի ժամկետով բնակվել Չեխիայի Հանրապետության տարածքում:

Ուսումը ներառում է. օրինակ՝ լեզվի և մասնագիտական պատրաստման դասընթացներ (համալսարանական կրթությանը նախորդող), լեզվի դասընթացներ՝ կազմակերված ԵՄ կամ միջազգային համաձայնագրերի շրջանակներում կամ փորձի փոխանակում և ուսումնական ուղևորություններ կրթության և մարդկային ռեսուրսների զարգացման համար պատասխանատու անձանց համար (եթե այս գործունեությունն իրականացվում է ԵՄ ծրագրերի շրջանակներում) և այլն:

Սա չի վերաբերում տարրական, միջնակարգ դպրոցներում կամ կոնսերվատորիայում ուսանելուն, որը չի իրականացվում փոխանակման կամ մասնագիտական փորձի ձեռքբերման ծրագրի շրջանակներում:

Դիմումը կարող է ներկայացվել դեսպանատուն:
Դիմումին կից ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին կարող եք տեղեկանալ http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/residence-in-the-czech-republic/239 կայքում:

Մշտական բնակության թույլտվություն

Մշտական բնակության թույլտվություն կարող են ստանալ.

- օտարերկրացիները, ովքեր երկարաժամկետ վիզայով հինգ տարի անընդմեջ բնակվել են Չեխիայի Հանրապետությունում,
- Չեխիայի Հանրապետության քաղաքացու ընտանիքի անդամները (ամուսին/կին, անչափահաս զավակ, 18 տարեկանից բարձր տարիքի զավակ, ով ի վիճակի չէ հոգ տանել իր մասին, 70 տարեկանից բարձր տարիքի միակ ծնող, որդեգրած զավակ). այս դեպքում հինգ տարվա անընդմեջ բնակության պայմանը պարտադիր չէ,
- Չեխիայի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողի ընտանիքի անդամ,
- մշտական բնակության թույլտվություն ունեցողի անչափահաս զավակ կամ 18 տարեկանից բարձր տարիքի զավակ, ով ի վիճակի չէ հոգ տանել իր մասին:

Մշտական բնակության թույլտվության համար դիմումը ներկայացվում է արտասահմանում Չեխիայի Հանրապետության դիվանագիտական առաքելություն կամ Չեխիայի՝ Օտարերկրացիների հարցերով ոստիկանության գրասենյակ: Դիմողը, ում դիմումն ընդունվում է, կստանա 10 տարվա վավերությամբ բնակության թույլտվություն:
Դիմումի ձևաթղթի համար այցելեք
http://www.mvcr.cz/rady/formulare/cizinci/zadost2.pdf կայք:

ԵՀ երկարաժամկետ բնակության թույլտվություն

Եթե դուք ԵՄ անդամ այլ պետության մշտական բնակիչ եք և եթե ցանկություն ունեք երեք ամսից ավելի ժամկետով մնալու Չեխիայի Հանրապետության տարածքում, կարող եք դիմել բնակության այս տեսակ թույլտվություն ստանալու համար:
Դիմումը կարող է հանձնվել դեսպանատուն կամ Օտարերկրացիների հարցերով ոստիկանության համապատասխան բաժին (ձեր ժամանակավոր բնակության թույլտվության վավերության

ժամանակամիջոցում, սակայն երկիր մուտք գործելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում):
Դիմումին կից ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին կարող եք տեղեկանալ http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/residence-in-the-czech-republic/239 կայքում:
Եթե դուք ԵՄ անդամ այլ պետության բնակչի ընտանիքի անդամ եք, կարող եք դիմել երկարաժամկետ բնակության թույլտվություն ստանալու համար, եթե ձեզ ԵՄ անդամ այլ պետության տարածքում ընտանիքի միավորման նպատակով բնակության թույլտվություն է շնորհվել, կամ եթե ԵՄ անդամ այլ պետությունում ձեզ շնորհվել է մշտական բնակչի օրինական կարգավիճակ:
Այս դեպքում դուք պետք է դիմումին կից ներկայացնեք նույն փաստաթղթերը, ինչ մշտական բնակիչն ինքը: Բացի այդ, դուք պետք է ձեր ազգակցական կապը հաստատող փաստաթուղթ ներկայացնեք (օրինակ՝ ամուսնության վկայական), ինչպես նաև ներկայացնեք ճամփորդական առողջական ապահովագիր:
Դիմումածևը կարող եք գտնել
http://www.mvcr.cz/rady/formulare/cizinci/zadost3.pdf կայքում:

5. Ապաստան շնորհելու գործընթացը

Ապաստանի տրամադրման հայցերի վերաբերյալ որոշում կայացնող իրավասու մարմինը Չեխիայի Հանրապետության Ներքին գործերի նախարարության՝ ապաստանի տրամադրման և միգրացիայի քաղաքականության (ԱՄՔԲ) բաժինն է:
Պրահայի օդանավակայան ժամանած՝ ապաստան հայցողներին տեղավորում են օդանավակայանի ընդունման կենտրոնում, իսկ նրանց խնդրի վերաբերյալ նախնական որոշումը կայացվում է ԱՄՔԲ աշխատակցի հետ հարցազրույցից հետո հինգ օրվա ընթացքում: Եթե հնգօրյա ժամկետում որոշումը չի կայացվում, ապաստան հայցողը տեղափոխվում է Չեխիայի Հանրապետության՝ ապաստան հայցողների ընդունման կենտրոններից մեկը: Բացասական որոշման բողոքարկումը կարող է դատարան ներկայացվել ԱՄՔԲ միջոցով՝ 7 օրվա ընթացքում: Եթե դատարանը որոշում չի կայացնում բողոքարկման հայցադիմումի ընդունումից 30 օրվա ընթացքում, դիմողները փոխադրվում են Չեխիայի

Հանրապետության ապաստան հայցողների ընդունման կենտրոններից մեկը: Պրահայի օդանավակայանում տեղավորած ապաստան հայցողներն իրավունք չունեն լքելու տարածքը: Չեխիայի Հանրապետության ընդունման կենտրոններում տեղավորված ապաստան հայցողները կարող են լքել դրանց տարածքը: Ապաստան հայցողը կարող է աշխատանքի թույլտվություն ստանալ տվյալ վայրի Աշխատանքի տեղավորման գրասենյակից՝ ապաստանի տրամադրման գործընթացն սկսվելուց միայն 1 տարի հետո: Փախստականի կարգավիճակն ավտոմատ կերպով Չեխիայի Հանրապետությունում մշտական բնակության իրավունք է տալիս: Այս կարգավիճակն ստացած անձինք հինգ տարուց կարող են դիմել Չեխիայի քաղաքացիություն ստանալու համար: Փախստականի կարգավիճակ ունեցողներն ընդգրկվում են Պետական ինտեգրման ծրագրում: Ծրագիրը նպատակ ունի օգնելու փախստականների՝ չեխական հասարակությանն ինտեգրմանը: Այս ծրագրի շրջանակներում կազմակերպվում են չեխերենի դասընթացներ, ինչպես նաև աջակցություն՝ բնակարանային և աշխատանքի տեղավորման խնդիրներում:

6. Ընտանիքի վերամիավորում

Հովանավորի կարգավիճակից կախված՝ ընտանիքների միավորման դեպքերը տարբերակված են ըստ երեք հիմնական տեսակի: Առաջին տեսակը վերաբերում է երրորդ երկրների այն քաղաքացիներին, ովքեր ունեն երկարատև կամ մշտական բնակության թույլտվություն և առնվազն 15 ամիս բնակվում են Չեխիայի Հանրապետությունում: Այս դեպքում ընտանիքի անդամ ասելով ի նկատի ունենք հովանավորի ամուսնուն/կնոջը, իր կամ ամուսնու/կնոջ անչափահաս զավակներին կամ խնամքի տակ գտնվող չափահաս զավակներին, հովանավորի խնամքին հանձնված անչափահասին և իր միակ ծնողին (65 տարեկանից մեծ կամ անկախ տարիքից, եթե առողջական պատճառներով ի վիճակի չէ հոգ տանել իր մասին): Եթե հովանավորն ունի երկարատև բնակության թույլտվություն, նրա ընտանիքի անդամներին ևս շնորհվում է երկարատև բնակության թույլտվություն՝ առնվազն մեկ տարի ժամկետով, որը կարող է երկարացվել: Եթե հովանավորն ունի մշտական բնակության

թույլտվություն, ընտանիքի անդամներին շնորհվում է երկամյա ժամկետով բնակության թույլտվություն, որը կարող է երկարացվել հինգ տարվա պարբերությամբ: Ընտանիքի անդամներն իրավունք ունեն աշխատելու (աշխատանքի թույլտվություն ստանալու պայմանով) կամ իրականացնել ինքնազբաղ տնտեսական գործունեություն:

Ընտանիքի վերամիավորման երկրորդ տեսակը վերաբերում է այն դեպքերին, երբ տվյալ անձը Չեխիայից բացի այլ՝ Եվրոմիության անդամ երկրի քաղաքացի է: Այս դեպքում ընտանիքի միավորման ենթակա են ընտանիքի հետևյալ անդամները. ամուսինը/կինը, ծնողը (եթե հովանավորը 21 տարեկանից ցածր տարիքի է), հովանավորի կամ իր ամուսնու/կնոջ զավակները (21 տարեկանից փոքր), խնամքի տակ գտնվող, իր կամ ամուսնու/կնոջ՝ ուղիղ գծով ազգական (ավագ կամ կրտսեր), հովանավորի հետ համատեղ բնակվող անձ, ով առողջական պատճառներով չի կարող հոգ տանել իր մասին և հովանավորի խնամքի կարիքն ունի: Այս օտարերկրացիներին օրենքով իրավունք է տրվում երկարատև բնակության թույլտվություն ստանալու՝ մինչև 5 տարվա բնակության ժամկետով, որը կարող է երկարացվել և որն ընձեռում է գրեթե նույն իրավունքները, ինչպիսիք ունեն Չեխիայի Հանրապետության՝ ԵՄ քաղաքացիները:

Ընտանիքի վերամիավորման դեպքերի երրորդ տեսակը վերաբերում է Չեխիայի Հանրապետության քաղաքացիներին: Միավորման ենթակա են ընտանիքի նույն անդամները, ինչ ԵՄ անդամ պետությունների քաղաքացիների պարագայում: Այս դեպքերում ընտանիքի անդամները մշտական բնակության թույլտվություն ստանալու իրավունք ունեն:
Ընտանիքի միավորման նպատակով մշտական բնակության թույլտվություն կարող են ստանալ այն անձանց ընտանիքի անդամները, ովքեր.

- ունեն մշտական կամ երկարատև բնակության թույլտվություն և առնվազն 15 ամիս բնակվել են Չեխիայի Հանրապետությունում
- ունեն փախստականի կարգավիճակ

Ընտանիքի անդամ են համարվում ամուսինը/կինը, անչափահաս զավակները (այդ թվում՝ խնամակալության վերցված), փախստականի կարգավիճակ ունեցող անչափահասի ծնողները/խնամակալները, բնակության թույլտվություն ունեցողի տարեց միակ ծնողը (65-ից բարձր

տարիքի), ընտանիքի հաշմանդամ անդամները (զավակներ կամ ծնողներ):
Դիմումը կարող է հանձնվել դեսպանատուն կամ Օտարերկրացիների հարցերով ոստիկանության համապատասխան բաժանմունք, եթե դիմողը 90-օրյա վիզայով գտնվում է Չեխիայի Հանրապետությունում կամ այլ նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվություն ունի:

Թույլտվությունը շնորհվում է ընտանիքի միավորման ենթակա անձի՝ բնակության թույլտվության վավերության ժամկետին համապատասխան տևողությամբ: Եթե ընտանիքի միավորման ենթակա անձն ունի մշտական բնակության թույլտվություն՝ ընտանիքի անդամին վերոհիշյալ թույլտվությունը շնորհվում է 1 կամ 2 տարվա ժամկետով:
Դիմումին կից պահանջվող այլ փաստաթղթերի ցանկը կարող եք գտնել http://www.en.domavcr.cz/advices-for-living-in-the-czech-republic/residence-in-the-czech-republic/239 հասցեով:

Եթե երկրի տարածքում ընտանիքի միավորման նպատակով երկարաժամկետ բնակության թույլտվությունը շնորհված է, դուք պարտավոր եք երկիր մուտք գործելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում անձամբ ներկայանալ Օտարերկրացիների հարցերով ոստիկանության համապատասխան բաժանմունք՝ բնակության թույլտվության քարտն ստանալու համար: Քարտն ստանալիս դուք պարտավոր եք ներկայացնել երկրում բնակվելու տևողությամբ ճամփորդական առողջական ապահովագիր:

Եթե ձեր ընտանիքի անդամը փախստական է Չեխիայի Հանրապետությունում, ձեր դիմումը կարող եք ներկայացնել ընտանիքի անդամին ապաստան շնորհելու որոշման՝ ուժի մեջ մտնելուց երեք ամսվա ընթացքում:

7. Առողջապահության համակարգը

Չեխիայի Հանրապետությունում գործում են թե՛ պետական, թե՛ մասնավոր բուժհիմնարկներ: Դրանցից գրեթե բոլորը առողջապահության ապահովագրական ընկերությունների հետ

պայմանագրեր ունեն առողջապահական ծառայությունների մատուցման և դրանց ծախսերի հատուցման վերաբերյալ, հետևաբար ապահովագրություն ունեցող անձանց բժշկական ծառայություններ են մատուցում առանց ուղղակի վճարման:
Հիվանդության դեպքում անձը սովորաբար նախ դիմում է առաջնային բուժսպասարկման բժշկի (թերապեվտ, ատամնաբույժ, գինեկոլոգ): Պետք է նախ ստուգեք, թե արդյո՞ք բժիշկը, ում ցանկանում եք դիմել, պայմանագիր ունի ձեր ապահովագրական ընկերության հետ (ուր դուք ապահովագրված եք): Չեխիայի Հանրապետությունում դուք կարող եք դիմել բժիշկ-մասնագետի՝ առանց առաջնային բուժսպասարկման բժշկի ուղեգրի: Անսպասելի հիվանդության դեպքում՝ ձեր թերապեվտի աշխատանքային ժամերից դուրս բուժօգնություն կարող եք ստանալ, ըստ հանգամանքների, հերթապահ բժշկական ծառայության կողմից: Անսպասելի հիվանդության կամ վնասվածքի դեպքում, եթե տվյալ անձն ի վիճակի չէ ինքնուրույն բժշկի մոտ հասնել, բուժօգնություն կտրամադրի շտապ բուժօգնության ծառայությունը, որի հեռախոսահամարն է 155: Դեղատները դեղատոմսով դեղերի բացթողումը կատարում են կամ անվճար՝ եթե դեղի արժեքն ամբողջապես հատուցում է ապահովագրական ընկերությունը, կամ վճարով՝ եթե ապահովագրական ընկերությունն արժեքը հատուցում է մասամբ, կամ չի հատուցում: Դեղատոմսերը տրվում են անվճար:
Չեխիայի Հանրապետությունում առողջապահական ծառայությունն իրականացվում է հանրային պարտադիր առողջապահական ապահովագրության հիման վրա: Մասնավոր առողջապահական ապահովագրությունը կամավոր է: Հանրային պարտադիր առողջապահական ապահովագրությունը ենթակա է Չեխիայի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող կամ Չեխիայի Հանրապետությունում գրանցված ձեռնարկության գուծատուի մոտ աշխատող անձանց մասին օրենքին: Հանրային առողջապահական ապահովագրությունը սահմանված է օրենքով և ապահովագրական ընկերության հետ պայմանագիր չի պահանջում: Ինչևէ, դուք իրավունք ունեք ընտրել, թե ո՛ր ապահովագրական ընկերությունում կցանկանայիք ապահովագրվել:
Այն անձինք, ովքեր չեն բավարարում հանրային առողջապահական ապահովագրության մեջ ներգրավվելու պայմանները, կարող են առողջությունն ապահովագրել մասնավոր կարգով: Այսպիսի

ապահովագրությունը կարող է կնքվել միայն Všeobecná zdravotní pojišťovna (Ընդհանուր առողջապահական ապահովագրական ընկերություն) կազմակերպության (VZP ČR) հետ:

8. Սոցիալական ապահովագրության համակարգը

Սոցիլական ապահովագրության արտոնություններից օգտվելու համար դուք պետք է ունենաք Չեխիայի Հանրապետությունում մշտական բնակության իրավունք, ինչպես նաև կոնկրետ արտոնությունների համար բավարարեք որոշակի պայմանների:
Պետական սոցիալական ապահովության արտոնություններին ենթակա՝ մշտական բնակություն ունեցողների թվին են պատկանում. փախստականի կարգավիճակ ունեցողները, 90-օրյա ժամկետը գերազանցող բնակության վիզա ունեցող անձինք, կամ երկարաժամկետ բնակության թույլտվություն ունեցողները՝ մեկ տարուց հետո:
Սոցիալական ապահովության արտոնությունների համար դիմումի ձևաթղթերը պետք է ներկայացվեն բնակության քաղաքի մունիցիպալ գրասենյակի՝ Պետական սոցիալական աջակցության գրասենյակ և հիմնավորված լինեն համապատասխան փաստաթղթերով:
Կոնկրետ արտոնությունների վերաբերյալ կարող եք տեղեկանալ http://www.mpsv.cz/en/1603 հասցեով:

9. Բնակարանային պայմանները

Չեխիայի Հանրապետությունում բնակարանային գները կարող են նշանակալիորեն տարբեր լինել՝ կախված տեղից, տան կամ բնակարանի չափից, կարգից և կահավորանքից: Բնակարանային վարձերն ամենաբարձրն են մեծ քաղաքներում, ուր գործազրկության տոկոսը ցածր է, մասնավորապես՝ մայրաքաղաքում:
Չեխիայի Հանրապետությունում կան վերահսկվող բնակվարձով համայնքային բնակարաններ, բայց դրանց թիվը գնալով նվազում է, և այդպիսի բնակարան ձեռք բերելու հավանականությունը փոքր է: Կան նաև կոոպերատիվ շենքեր, որոնք պատկանում են բնակարանային կոոպերատիվներին և դրանցում բնակարանները վարձակալության են տրվում կոոպերատիվի անդամներին: Բնակարանային կոոպերատիվի

անդամները հաճախ ենթավարձակալության են տալիս իրենց բնակարանը: Այլ բնակարաններն ու տները մասնավոր սեփականություն են, և դրանց վարձակալությունն արվում է համաձայն քաղաքացիական օրենսդրության:

Տարածված գործընթաց է ժամանակավոր վարձակալությունը: Վարձակալության պայմանագիրը ևս կնքվում է քաղաքացիական օրենսդրության համապատասխանությամբ: Նախքան նման վարձակալության պայմանագիր կնքելը՝ խորհուրդ է տրվում դիմել իրավաբանական խորհրդատվության:

Բնակարան կամ տուն գնելիս դուք պետք է գնման գրավոր պայմանագիր կնքեք: Դուք տվյալ բնակարանի կամ տան սեփականատերը կհամարվեք այն բանից հետո, երբ սեփականության վկայականը պաշտոնապես կգրանցվի անշարժ գույքի կադաստրում, ուր պահվում են սեփականության վկայականների և Չեխիայի Հանրապետության տարածքում այլ անշարժ գույքի սեփականության իրավունքների գրանցումները, և որը վերահսկվում է հողային կադաստրի գրասենյակի կողմից: Անշարժ գույքի գնման կամ վաճառքի դեպքում վաճառողը վճարում է սեփականության փոխանցման հարկ: Այս հարկի վճարումը երաշխավորվում է գնորդի կողմից: Բնակարան կամ տուն գնելիս ևս խորհուրդ է տրվում դիմել իրավաբանական խորհրդատվության: Տուն կամ բնակարան գնելիս ընդունված է օգտվել անշարժ գույքի գործակալության ծառայություններից: Կոմիսիոն վճարը սովորաբար տատանվում է սեփականության վաճառքի գնի 3-ից 5%-ի սահմաններում, իսկ վարձակալության միջնորդության պարագայում հավասար է մեկ ամսվա վարձի չափին:

10. Դիպլոմների ճանաչումը

Այն դեպքերում, երբ Չեխիայի Հանրապետությունը դիպլոմների փոխադարձ ճանաչման միջազգային պայմանագիր է ստորագրել, Պրահայի քաղաքապետարանի կրթության բաժինը օտարերկրյա կրթական հաստատության որակավորման հավասարազորության ճանաչման վկայական է տալիս:

Չեխիայի Հանրապետությունը նման համաձայնագրեր ունի Ալբանիայի և Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության հետ (որը վավեր է համարվում Բոսնիայի և Հերցեգովինայի, Մակեդոնիայի Հանրապետության, Մոնտենեգրոյի և Սերբիայի, բայց ոչ՝ Խորվաթիայի համար):
Նման համաձայնագրի բացակայության պարագայում Պրահայի քաղաքապետարանի կրթության բաժինը որոշում է կայացնում տվյալ օտարերկրյա դիպլոմի վավերության վերաբերյալ: Այն դեպքում, երբ օտարերկրյա կրթական հաստատության դիպլոմի ընդգրկումն ու բովանդակությունն էականորեն տարբերվում են Չեխիայի համարժեք ծրագրից կամ չկան երաշխավորական փաստաթղթեր, կարող է առաջարկվել՝ վավերացման համար քննություն հանձնել: Դիպլոմները պետք է պաշտոնապես թարգմանվեն և հաստատվեն Չեխիայի Հանրապետության դեսպանատան կողմից:
Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ
http://uok.msmt.cz/procedure.php?sec=postup&w=1 հասցեով:

11. Քաղաքացիության/հպատակության տրամադրումը

Որպես սկզբունք՝ յուրաքանչյուր անձ, ով Չեխիայի քաղաքացու զավակ է, ծննդյան պահից համարվում է Չեխիայի Հանրապետության քաղաքացի: Եթե Չեխիայի քաղաքացի է միայն երեխայի հայրը, իսկ ծնողներն ամուսնացած չեն, պահանջվում է հայրության հաստատում՝ ծնողները պետք է համատեղ հայտարարություն ներկայացնեն գրանցման գրասենյակ կամ դատարան: Չեխիայի Հանրապետությունում ոչ չեխ ծնողներից ծնված զավակները Չեխիայի քաղաքացիություն չեն ստանում, բացի այն դեպքերից, երբ.

- ծնողները չունեն որևէ քաղաքացիություն,
- ծնողներից առնվազն մեկը Չեխիայի Հանրապետության մշտական բնակիչ է:

Այն քաղաքացիները, ովքեր առնվազն 5 տարի մշտական բնակության թույլտվություն են ունեցել և այդ ժամանակի մեծ մասը բնակվել են Չեխիայում, կարող են դիմել՝ Չեխիայի հպատակություն ստանալու համար, եթե ապացույցներ բերեն, որ զրկվել են կամ կզրկվեն իրենց նախկին քաղաքացիությունից՝ Չեխիայի քաղաքացիություն ստանալիս,

որ բարեպաշտ անձ են և որ ազատ տիրապետում են չեխերենին: Չեխիայի օրենքն արգելում է երկքաղաքացիությունը, թեև կան բացառություններ:
Բնակության մասին պահանջը կարող է անտեսվել, եթե անձն ունի մշտական բնակության թույլտվություն և.

- ծնվել է Չեխիայի Հանրապետությունում, կամ
- առնվազն 10 տարի անընդմեջ ապրել է Չեխիայի Հանրապետությունում, կամ
- նախկինում ունեցել է Չեխիայի քաղաքացիություն, կամ
- որդեգրված է Չեխիայի քաղաքացու կողմից, կամ
- ամուսինը/կինը Չեխիայի քաղաքացի է, կամ
- ծնողներից առնվազն մեկը Չեխիայի քաղաքացի է, կամ
- Չեխիայի Կառավարության հրավերով՝ նախքան 1994թ. դեկտեմբերի 31-ը Չեխիայի Հանրապետություն է տեղափոխվել, կամ
- չունի քաղաքացիություն, բայց Չեխիայի Հանրապետությունում ունի փախստականի կարգավիճակ:

Օգտակար կոնտակտներ և տեղեկություններ

Չեխիայի Հանրապետությունում
Հայաստանի Հանրապետության դեսպանատուն
Արտակարգ և լիազոր դեսպան
Նստավայրը՝ Վիեննայում
Հադիկգասսե (Hadikgasse) 28, A-1140, Վիեննա, Ավստրիա
Հեռ.՝ (43 1) 5227479 (43 1) 5243668 (հյուպատոսական)
Ֆաքս՝ (43 1) 5227481
էլ.փոստ՝ armenia@armembassy.at

Վրաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանատունը ներկայացնում է նաև Հայաստանը
Ճավճավաձեի պող. 37-շենք VI
0162 Թբիլիսի, Վրաստան

Հեռ.՝ +995-32-916740; +995-32-916742
Ֆաքս՝ +995-32-916744
էլ.փոստ՝ tbilisi@embassy.mzv.cz; czechembassy@gol.ge
էլ.կայք՝ URL: www.mzv.cz/tbilisi

Օտարերկրացիների ինտեգրման կենտրոն/ Centrum pro integraci cizinců
Հասարակական կազմակերպություն, որն աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում ներգաղթողներին, այն է՝ ապաստան հայցողներին և Չեխիայի Հանրապետությունում երկարաժամկետ կամ մշտական բնակություն ունեցող այլերկրացիներին
Հասցեն՝ Կուբելիկովա (Kubelíkova) 55, Պրահա 3, 130 00
Հեռ.՝ +420 222 713 332
էլ.փոստ՝ info@cicpraha.org
http://www.cicpraha.org/

Միգրացիայի հարցերով զբաղվող կենտրոն/ Centrum pro otázky migrace (COM)
Միգրացիայի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն
Հասցեն՝ Սենովաժնա (Senovážná) 2, Պրահա 1, 110 00
Հեռ.՝ +420 224 228 582
migrace@refug.cz
http://www.migrace.com/

Չեխիայի կաթոլիկական կարիտաս/ Česká katolická charita
Հասցեն՝ Վլադիսլավովա (Vladislavova) 12, Պրահա 1, 110 00
Հեռ.՝ +420 296 243 330
էլ.փոստ՝ sekretariat@charita.cz
http://www.charita.cz/

Չեխիայի հելսինկյան կոմիտե/ Český helsinský výbor
ՉՀԿ-ն վերահսկում է մարդու և քաղաքացիական իրավունքներին առնչվող օրենսդրական գործունեությունը: Այն անվճար խորհրդատվություն է տրամադրում այն անհատներին, ում իրավունքները վտանգված են:
Հասցեն՝ Օստրովսկեհո (Ostrovského) 253/3, 150 00 Պրահա 5
Հեռ.՝ +420 257 323 508

էլ.փոստ՝ sekr@helcom.cz
http://www.helcom.cz/

Լա Ստրադա
Լա Ստրադան զբաղվում է կանանց թրաֆիքինգի կանխարգելման հարցերով: Այն աջակցություն է տրամադրում թրաֆիքինգի զոհերին, ինչպես նաև հանրությանն իրազեկում է այս երևույթի մասին:
Հասցեն՝ Ցպահանջ (P.O.Box) 305, Պրահա 1, 111 21
Հեռ.՝ +420 222 721 810
SOS հեռախոսակապ՝ +420 222 717 171
էլ.փոստ՝ lastrada@strada.cz
http://www.strada.cz/en/

Փախստականներին աջակցման կազմակերպություն/ Organizace pro pomoc uprchlíkům (OPU)
Այս հասարակական կազմակերպության նպատակն է՝ աջակցել Չեխիայի Հանրապետությունում ապաստան հայցողներին և այլ օտարերկրացիների, ինչպես նաև նրանց, ովքեր փախստականի կարգավիճակ ունեն կամ գտնվում են երկրի ժամանակավոր պաշտպանության ներքո:
Հասցեն՝ Վելետրժնի (Veletržní) 24, Պրահա 7, 170 00.
Հեռ.՝(+420) 220 397 220, (+420) 220 397 355
Ֆաքս՝ (+420) 233 371 258
էլ.փոստ՝ opu@opu.cz
www.opu.cz

Ինտեգրման խորհրդատվական կենտրոն/ Poradna pro integraci (PPI)
Հասցեն՝ Սենովաժնա (Senovážná) 2, Պրահա 1, 110 00
Հեռ.՝ +420 224 233 034, +420 224 216 758
էլ.փոստ՝ ppi@iol.cz
http://www.p-p-i.cz

Քաղաքացիության, քաղաքացիական և մարդու իրավունքների հարցերով խորհրդատվական կենտրոն/ Poradna pro občanství, občanská a lidská práva (PPO)
Հասցեն՝ Պետրսկա (Petrská) 29/ 1168
Հեռ.՝ +420 222 809 210, 222 809 214, 224 829 087,
222 809 406, 222 809 409, 222 809 364 (նաև ֆաքս)
էլ.փոստ poradna@iol.cz, poradna@poradna-prava.cz
http://www.poradna-prava.cz

Փախստականների հարցերով խորհրդատվական կենտրոն/ Poradna pro uprchlíky (PPU)
Կենտրոնն օգնում է նրանց, ովքեր այս կամ այն պատճառով լքել են իրենց երկիրը և ապաստան են հայցել Չեխիայի Հանրապետությունում: Միևնույն ժամանակ այն խորհրդատվություն է տրամադրում Չեխիայի Հանրապետությունում բնակվող օտարերկրացիներին՝ այսպիսով նպաստելով նրանց ինտեգրմանը:
Հասցեն՝ Պետրսկա (Petrská) 29/ 1168
Հեռ.՝+420 222 809 210, 222 809 214, 224 829 087,
222 809 406, 222 809 409, 222 809 364 (also fax)
էլ.փոստ՝ poradna@iol.cz, poradna@poradna-prava.cz
http://www.poradna-prava.cz

Միգրանտներին աջակցող քաղաքացիների ընկերություն / Sdružení občanů zabývajících se emigranty (SOZE)
SOZE-ն օգնություն է տրամադրում ապաստան հայցողներին և այլ կատեգորիաներով Չեխիայի Հանրապետություն ժամանող օտարերկրացիների: Օգնությունը կայանում է հետևյալում. անվճար իրավական, սոցիալական և հոգեբանական խորհրդատվություն, ժամանցի և ուսուցման կազմակերպում, ինչպես նաև համալիր սոցիալական և իրավական աջակցություն երկարաժամկետ բնակությամբ այլերկրացիներին և փախստականի կարգավիճակ ստացած անձանց:
Հասցեն՝ Մոստեցկա (Mostecká) 16, Բռնո, 614 00
Հեռախոս՝ +420 545 213 643
էլ.փոստ՝ soze@soze.cz
http://www.soze.cz/

In Baze – համայնքային կենտրոն օտարերկրացիների համար
2006 թվականի մայիսից ի վեր կենտրոնը զբաղմունք է առաջարկում Չեխիայի Հանրապետությունում բնակություն հաստատած օտարերկրացիներին: Դիմել կարող են միգրանտները, փախստականները և բնակության ցանկացած կարգավիճակ ունեցող օտարերկրացիները:
Հասցեն՝ Ռումունսկա (Rumunská) 24, Պրահա 2, 120 00
Հեռ.՝ (+420) 739 578 343
էլ.փոստ՝ inbaze@berkat.cz
http://www.berkat.cz

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM)
Ղեկավարում է մասնագիտական որակավորմամբ աշխատողների ընտրության ծրագիրը (տե՛ս 3 դ) բաժինը) և աջակցում է միգրանտների ինտեգրմանը:
Հասցեն՝ Դուկելսկիխ հրդինու (Dukelských hrdinů) 692/35
170 00 Պրահա 7, Չեխիայի Հանրապետություն
Հեռ.՝ (+420) 233 37 01 60, (+420) 233 37 67 90
Ֆաքս՝ (+420) 233 38 22 59
էլ.փոստ՝ prague@iom.int
http://www.iom.cz